ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2014 թվականի N 433-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 28-ի N 27-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աղավնաձոր, Բջնի, Գետարգել գյուղական համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ՝ 2015 թվականի մարտի 15-ին:

2. Առաջարկել թիվ 25 և 28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Աղավնաձոր, Բջնի, Գետարգել համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի դեկտեմբերի 17
ք. Հրազդան